ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

16 սեպտեմբերի 2025թ. **N 52-Ն**
ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 28-Ի ԹԻՎ 33-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2025 թվականի մարտի 28-ի «Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամների ատեստավորման ժամանակացույցը, ատեստավորման հանձնաժողովի կազմը, աշխատակարգը, ձևավորման և ատեստավորում անցկացնելու կարգը սահմանելու մասին» թիվ 33-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված կարգի 12-րդ կետի առաջին պարբերությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ երկրորդ և երրորդ նախադասություններով. «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահն ի պաշտոնե հանդիսանում է ատեստավորման հանձնաժողովի նախագահը: Եթե Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահն ընդգրկված չէ ատեստավորման հանձնաժողովի կազմում կամ բացակայում է, ապա ատեստավորման հանձնաժողովի նախագահ ի պաշտոնե հանդիսանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալը, իսկ եթե վերջինս ընդգրկված չէ ատեստավորման հանձնաժողովի կազմում կամ բացակայում է, ապա ատեստավորման հանձնաժողովի նախագահ ի պաշտոնե հանդիսանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղարը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**